« 03 » օգոստոս 2026թ. No 4474 - Ա

«ՈՒՐՈԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՈՂՆԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ

Սեպտեմբերի 28, 2026թ., ք. Երևան («Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց» ՓԲԸ)

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ մանկաբարձ-գինեկոլոգներ, ուրոլոգներ, ուրոգինեկոլոգներ, մանկաբարձուհիներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 80 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 5 տեսական և 2 գործնական կրեդիտ
- Կոնտակտ karine.abelyan@wigmore.am

09:00-09:15	Ծրագրի և նպատակների ներկայացում
09:15-10:45	**Սեմինար** Միզային անմիզապահություն. բուժման անհատականացված մոտեցումներ՝ ստանդարտ արձանագրություններից դուրս: Սթրեսային, հրատապ (urge) և խառը միզային անմիզապահության տեսակներ տարբերակում: Բուժման անհատականացված ռազմավարությունների քննարկում՝ ըստ պացիենտի կլինիկական առանձնահատկությունների: Բուժական վարժությունների, վարքագծային փոփոխությունների և կենսակերպի միջամտությունների դերի ներկայացում: Բուժման փուլային մոտեցումների քննարկում՝ կոնկրետ կլինիկական դեպքերի օրինակով
10:45-12:00	**Սեմինար** Կոնքի օրգանների իջեցում (պրոլապս). Կեգելի վարժություններից անդին. ի՞նչն է իրականում արդյունավետ կոնքի օրգանների պրոլապսի պահպանողական բուժման վերաբերյալ ժամանակակից ապացուցողական տվյալների ներկայացում: Քննարկել ներորովայնային ճնշման վերահսկման և բուժական վարժությունների նշանակման սկզբունքները: Դիտարկել ֆունկցիոնալ վերականգնման ժամանակակից ռազմավարությունները: Սահմանել այն իրավիճակները, երբ անհրաժեշտ է պացիենտին ուղղորդել այլ մասնագետների և կազմակերպել բազմամասնագիտական բուժում
12:00-13:00	Ընդմիջում

13:00-14:15	**Սեմինար** Քրոնիկ փորկապություն և դեֆեկացիայի խանգարումներ. բժշկական և ֆիզիկական թերապիայի համատեղ մոտեցումներ:Կոնքի հատակի անատոմիայի և ֆունկցիայի ներկայացում: Քրոնիկ փորկապության և դեֆեկացիայի խանգարումների հիմնական պատճառներն ու նպաստող գործոնների քննարկում: Բժշկական և վերականգնողական բուժման համագործակցային մոտեցումների ներկայացում կլինիկական մտածողության զարգացում՝ կոնկրետ կլինիկական դեպքերի քննարկման միջոցով
14:15-15:15	**Սեմինար** ֆիզիկական թերապիան դիսպարեունիայի դեպքում: Տարբերակել դիսպարեունիայի առավել հաճախ հանդիպող պատճառները: Նկարագրել մկանային-կմախքային և ոչ մկանային-կմախքային գործոնները, որոնք նպաստում են դիսպարեունիայի զարգացմանը: Քննարկել ապացույցների վրա հիմնված բուժական ռազմավարությունները: Կլինիկական դեպքերի քննարկման միջոցով կիրառել դիսպարեունիայի ախտորոշման և բուժման սկզբունքները
15:15-17:00	**Գործնական աշխատանք** Կոնքի հատակի մկանների ֆունկցիոնալ գնահատման հիմնական սկզբունքները: Թերապևտիկ վարժությունների և շարժողական վերահսկման տեխնիկաների գործնական կիրառում: Ճնշման կառավարման և շնչառական մեխանիկայի ուսուցման մեթոդներ: Կլինիկական դեպքերի վերլուծություն և բուժման պլանի կազմում
17:00-17:15	Գործնական աշխատանքի արդյունքների ամփոփում

Սեմինարավար՝ Լինդա Շնայդեր: